ԳՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՈՐՊԷՍ ՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԼՈՒՍՈՅ ԱՌԱՒՕՏ...»

ՍՅՆՔԱՀԱՆ ՍԻՐԵԼԻ ԼՈՒՍԻՆԷՆ

«Լուսինէն նոյն հաւատով, նոյն նուիրումով պայծառացրեց նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի հայոց աղօթքի տաճարները եւ բեմահարթակները՝ հմայիչ կատարումովը մեր հոգեւոր ու ժողովրդական երաժշտութեան:

Թոլորիս հոգիներում միշտ պիտի հնչեն Լուսինէի «Տէր ողորմեա»-ն եւ «Առաւօտ լուսոյ»-ն: Հէգ Լուսինէն ինքն եւս իր աղօթաբոյր երգով, իր հաւատաւոր հոգւով, իր անձնազոհ նուիրաբերումով մեր եկեղեցու ու ազգի կեանքում մշտապէս հանդիսացաւ մի հոգեւոր լուսոյ առաւօտ»:

ՎԱՀԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Իրրև սկիզբ

Ես հաստատ համոզված եմ, որ եթե Հայոց գրականության բառ ու խոսքի վարպետին երբևիցե խնդրեին գնահատել, ասենք, Հայոց արվեստի մյուս վեհությանը, որ էր Լուսինե Զաքարյանը, անշուշտ իր հերոսի՝ Օհան-ամու հանդարտությամբ ձեռքը կառներ համբերանքի չիբուխը, կնստեր թախտին, խաղաղորեն կքաշեր այն և, խորը հոգոց հանելով, կասեր. «Մարգը գնացական է, նրա գործը՝ մնացական. ասել է՝ ինքն է մնացական: Ա՛յ, խոսքի օրինակ. էս շաքարը գցեցիր չայի մեջ, հալավ,

կորավ, չկա. բայց չայն անուշցավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարհքը կանուշցնե: Թե չէ առանց լավ մարդու աշխարհքը չա՛տ դառն է՝ օձի լեղի...»:

Հիմա երկուսդ էլ չկաք. ո՛չ դու՝ խոսքի վարպետդ, և ո՛չ էլ դու՝ երգարվեստի թագուհիդ: Երկուսիդ մասին էլ խոսում ենք անցյալով: Սակայն այս անցյալը միայն ֆիզիկական դադարություն է պարագրում իր մեջ: Իրավամբ երկուսդ կաք, ապրում եք, ձեր արած-դրածով լցնում, նաև զարդարում մեր օրերը: Լավը, գեղեցիկը, վսեմը երբեք ժամանակի սահմաններում չեն պարփակվում: Դրանք հավերժի կնիքն ունեն և ապրելու են, քանի դեռ մարդկությունն ինքն էլ կա:

Իրավամբ, ես և դու ծանոթներ չենք եղել, սիրելի Լուսինե: Գուցե նաև անհարկի է հիմա քեզ այսքան մտերմիկ տոնով դիմելը: Սակայն թվում է, թե մենք մտերիմներ ենք, որովհետև քո երգը ասես իմ հոգուց է հնչել: Այն՝ ազգիդ, անգամ աշխարհի սեփականությունն է: Իսկ քեզ, համոզված եմ, երբեք չեն մոռանալու: Դու ապրողների հետ համաքայլ գնալու ես դեպի հավերժություն այնքան ժամանակ, քանի դեռ երկիր մոլորակի վրա թեկուզ մեկ հայ կա և քանի դեռ հնչելու են հայոց «Անտունի»-ն, «Դլե յաման»-ը, «Կռունկ»-ը, եկեղեցիներում ղողանջելու են «Տէր ողորմեա»-ն, «Ցորժամ...»-ը, «Սուրբ, սուրբ»-ը, քանի դեռ հայ հավատավորը ծնրադիր իր աղոթքն է առաքելու առ Բարձրյալը, հայցելու է քեզ այնքա՜ն հոգեհարազատ Տիրամոր բարեխոսությունը...

Ես կարող եմ խոսքս ամբողջությամբ կառուցել անգամ քո մասին գրված հրաշք տողերով, որոնք ասես մի համահունչ սիմֆոնիա են կազմում, լրացնում մեկը մյուսին: Փույթ չէ, թե ասվել են տարբեր երկրներում, տարբեր մասնագիտությունների ու ազգությունների պատկանող մարդկանց կողմից, տարբեր ժամանակներում: Դրանք այսօր ևս նույնքան կենդանի են, հնչեղ, ինչպես քո երգը, ձայնիդ բյուրեղյա ղողանջները, անեղծելի ու ջերմ ժպիտդ, ծիծաղուն աչքերիդ հմայիչ ու անմեկնելի փայլը: Այո՛, դու կաս...

«Մարդ էլ կա, մարդ էլ...»

Բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Շտիկյանը մահվանդ տխրալից առիթով մի հոդված էր գրել, ուր նկարագրում էր գրականության ինստիտուտում տեղի ունեցած մենահամերգդ: Այնպես կենդանի էին այդ տողերը, որ թվում էր, թե ես ևս ներկա եմ եղել այնտեղ: Նկարագրելով Բարսեղ Կանաչյանի «Օրոր» երգի կատարումդ, գրում է. «Տեր իմ Աստված, դա ե՞րգ էր, թե՞ հրեշտակների քաղցրալուր մրմունջ, թե՞ տիեզերական խորհրդավոր անսահմանությունից մեզ հասնող անմեկնելի ղողանջների մի հրաշք-համադրություն: Դա ե՞րգ էր, թե՞ անճառելի հնչյունների, հոգու աննյութական ու անքնին կայլակումների, մայրական անբիծ ու խանդաղատ սրտի սրբազան ալեբախումների մի քաղցրօրոր վիժակում...»:

Հետո նա պատմում էր քո մասին, ֆրանսիական խստապահանջ արվեստասերին ներկայանալուցդ հետո ստացածդ «Կարտ բլանշ»-ների, քո համեստության ու ամոթխածության մասին: Ես քեզ այսքան մանրամասն նկարագրել չեմ կարող, քանի որ դու ինձ և իմ նման շատերի համար միշտ էլ մնացել ես որպես անհասանելի մի բարձունք, անիրականանալի մի երազանք, թեև ուսանողությանս տարիներին հաճախ էիր երգում Պետական Համալսարանի երգչախմբի հետ, որի ղեկավարը ամուսինդ էր՝ Խորեն Պալյանը, որ նաև ինձ գրաբար էր ուսուցանում, քո մասին ակնածանքով էր պատմում իմ ուսանող ընկերուհին: Հետո քեզ տեսա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, երբ ամեն պատարագից հետո, հանդարտ քայլերով, ասես խորապես ապրելով ու զգալով բակում թագավորող անդորրն ու խաղաղությունը, առաջանում էիր դեպի ավտոբուսը, որը քեզ, մյուսների հետ միասին, դարձյալ պիտի քաղաքամայր Երևան տաներ: Ո՛չ տեսնում էիր քեզ ուղղված զարմացական հայացքները, ո՛չ լսում էիր քո հասցեին ասված հիացական խոսքերը և ո՛չ էլ ուշադրության արժանացնում գործընկերներիդ չարախոսությունները: Այս ամենը քեզ համար վերացական էին, անիրական, անըմբռնելի: Ճշմարիտը միայն իրական աշխարհն էր իր հրաշք գեղեցկությամբ, Աստվածային արարչագործության կատարելությամբ: Իսկ դու այդ կատարելության ամենաներդաշնակ տարրն էիր, կամ մեծ բանաստեղծի խոսքի փիլիսոփայական ընկալման լավագույն դրսևորումը՝ «Մարդ էլ կա, մարդ էլ...»:

«Դա մեռնողներին պետք չէ, ես գիտեմ,
Բայց ապրողներիս շա՜տ է հարկավոր...»

Սևակյան այս խոսքերի փոքր-ինչ տարբերակված տողերն է հաճախակի, ամեն պատեհ առիթով կրկնում Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երբ ցանկանում է ապրողներիս հոգում վերարթնացնել, վերակերպավորել մեծանուն ու մեծահարգ այն մարդուն, ում հիշատակն են տվյալ պահին ոգեկոչում ներկաները: Այս խոսքերը, հավատա, հնչեցին քեզ համար ևս:

Դու հիմա ճիշտ վաթսուն կլինեիր: Քայլող, շնչող ու ապրեցնող մի հրաշք, աստվածապարգև շնորհով օժտված մի իրական երազ, որ երազի թևով, իբրև մի հեքիաթ, ամփոփվեցիր Սուրբ Գայանե վանքի բակում: Քեզ հրաժեշտի ու բաժանման սրտակեղեք խոսքեր ասացին ծանոթ-բարեկամներդ: Հիշեցին մահվանիցդ առաջ, հայոց լեզվաբանության հմուտ գիտակ Ռաֆայել Իշխանյանի հետ հիվանդանոցում ունեցածդ վերջին զրույցի ժամանակ տվածդ հարցը, թե «Մեռնելը շա՜տ վատ բան է, ի՞նչ եք կարծում», որին հետևել էր նույնքան պարզ, սակայն իմաստալից պատասխանը. «Եթե մարդը Աստծու մոտ է դնալու, վատ բան չէ»: Դու մի պահ լռել էիր և ապա ավելացրել. «Ես էլ եմ այդպես կարծում»:

Քեզ ծածկեցին հողի գորշ շերտով, սակայն քեզնից ճառագող լույսը սփռվեց ամենուր, մարդկանց հոգիներում ապրեց որպես «Խորհուրդ

խորին», «Սայլն այն իջաներ», «Հավուն–հավուն», «Հովիկ մի պայծառ տեսի», «Տիրամայր», «Գարուն ա», «Ջինար ես», «Քելեր–ցոլեր»... Մի ողջ աշխարհ, որ խոնարհվել ու ծնկի էր եկել երգարվեստիդ կատարելության առջև, արտասվեց քեզ համար:

Սակայն... շրջապատում իշխող խաղաղությանը թագավորող չիրիմդ չմոռացվեց: Շատ անգամ եմ տեսել հոգուդ մաքրությունն ունեցող ճերմակ տապանաքարիդ շուրջը բոլորված տարեց ու մանուկ երկրպագուներիդ, մտերիմ–հարազատներիդ, անգամ նախանձողներիդ, ովքեր թե՛ Հայաստան աշխարհի, թե՛ Արցախի և թե՛ Սփյուռքի տարբեր վայրերից իրենց հարգանքի ու խոնարհության տուրքն են բերել՝ քեզ ընծայելու: Ձայներիզներից հնչել է երգդ ու ինձ թվացել է, թե ուր որ է, մի կողմ կգնա չիրմաքարդ, ու մերօրյա վկաղ վեր կելնես այնտեղից՝ կրկին միանալու այն ձայներիզին, որից հնչում է քո զանգակ ձայնը, ելևէջում մարդկանց հոգիներում, ստիպում նրանց լինել հեզ ու խոնարհ, համեստ ու բարեպաշտ, ինչպես էիր դու, շարունակել այն շիտակ ուղին, որի սկզբնավորողն էիր, իսկ լուսացույցը՝ քո անմահ երգը... Այսպես են քեզ ծանոթացնում երկրպագուներդ մերօրյա սերնդին, ովքեր բախտ չեն ունեցել քեզ անձամբ լսելու կամ տեսնելու:

Աստծո գործերն անքննելի են, սիրելի՛ Լուսինե: Բայց մենք քաջ գիտենք, որ ամեն ոգեկոչում քեզ այլևս անհրաժեշտ չէ, դա մեզ է պետք, որպեսզի այս կերպ փոքր–ինչ մաքրվենք, վերհանանք՝ մեծերիդ սրբությունից մի փոքրիկ շյուղ մեր հոգիներում ունենալու համար:

«Երանեկ նրան, ով իր գործով
Կապրի անվերջ, անդադար...»

Մեծահարգ Խորեն Պալյանի հետ գործընկերոջս ունեցած զրույցի ժամանակ վերջինս խնդրել էր մի հոդված՝ «Էջմիածին» ամսագրի հերթական համարում տպագրելու: Նա նաև ավելացրել էր, թե ես՝ ամսագրի խոնարհ աշխատակցուհիս, ես կարող եմ պատրաստել Լուսինեի մասին տպագրվելիք հոդվածը: Մի քանի վայրկյան տևող լռությանը հետևել էր պատասխանը. «Իսկ ձեր աշխատակցուհին ճանաչե՞լ է Լուսինեին»:

Շատ սիրելի Խորեն Պալյան. Ձեր աչքերի առջև է հասակ առել, Ձեր օգնությամբ անձեռակերտ բարձունքներ նվաճել Լուսինեն՝ այն Սվետլանան, որ առաջին մենահամերգներն էր տալիս Հայաստան աշխարհում: Ինքը հանդարտ ու խաղաղ հոգով բեմ էր ելնում, բայց Դուք էիք ապրում հուզումն ու անհանգստությունը: Սակայն միասին էիք կիսում հաղթանակների բերկրանքը: Ինձ թվում է, որ այդ հաղթանակները միայն հրաշք երգչուհուն չեն պատկանել, դրանք անուղղակիորեն նաև մերն են եղել, ողջ հայ ժողովրդինը, համայն աշխարհինը: Լուսինեն հարազատ ու մտերիմ է եղել ոչ միայն նրանց, ովքեր շրջապատել են իրեն, այլ առավել գնահատելի է եղել նրանց կողմից, ովքեր որպես անձնավորություն չեն ճանաչել նրան, սակայն որպես աստվածային մի էակ, որի արվեստի լեզուն

հասկանալի է եղել համայն մարդկությանը, պաշտել են, սիրել ու մեծարել: Ես նրանցից մեկն եմ, ովքեր հեռվից են սիրել Լուսինե-հրաշքին:

Նաև կամենում եմ ասել, որ մեծություններին նկարագրելու համար պարտադիր չէ նրանց անձամբ ծանոթ լինել: Գեղեցիկը, վսեմը, կատարյալը հանուրի սեփականությունն են, և ամեն ոք կարող է նկարագրել մեծությունն իր ընկալման կարողությունների սահմաններում: Որքան ինձ հաջողվեց հարգանքի ու նվիրումի խոսքեր ասել մեծն Լուսինեի մասին, չգիտեմ, սակայն մի բան միայն անժխտելի է. Մեծերը սովորական մահկանացուներիս գովեստի ու վեհության ջերմ խոսքերի կարիքը չունեն, մեզ է անհրաժեշտ նրանց հաճախակի վերհիշել, որպեսզի նրանց օգնությամբ կարողանանք հարգել ինքներս մեզ, մեծարելով նրանց՝ մենք նույնպես վեր բարձրանանք, որ կարողանանք իրավամբ կրկնել Ամենայն Հայոց Բանաստեղծի խոսքերը.

«Երնեկ նրան, ով իր գործով
Կապրի անվերջ, անդադար...»: